

պատճառաւ, որինակ, այն կրթեարանները, որոնք հաստատ լինելով միշտ և անընդհատ մի վազուց որոշեալ ուղղութեանը և ուղւոյն, մի և նոյն ժամանակ և անսխալօրէի կն իւրեանց գործողութիւններում, աներկբայելի և հաստատուն իւրեանց պահանջներն ենք։ Այսպիսի կրթեարաններին, առում եմ, յատկացեալ է անշուշտ այն դաստիարակական ոյժը և ազդեցութիւնը, որ ունին Անգղիացւոց և Ամերիկացւոց ուսումնարանները և որին զարմնացած է մնացել անբողջ Աւրոպան։

Ն. Սալապիէի հոռէից։

Ս. Գետեքոյրց։

**ՅՈՐԴՈՐ**

Ի ՍԷՐ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Անտարակոյն եմ, թէ իւրաքանչիւր բարեմիտ անձն կը հաւանի, որ այսօրուան լուսաւորեալ ազգերը միայն մարդութեան, մարդասիրութեան բարձր աստիճանին, և հետևաբար երջանկութեան հասած են, որոնց մայրենի լեզուի գրականութիւնը օր ըստ օրէ հարստացաւ յատաճ կ'զիմէ ձոխ և ամենեցուն հասարակաբար հասկանալի դիւրին ուժով. և այս ամենահարկաւոր առարկայն է եղել մինչ ցայսօր առաջին և ամենազգիտաւոր միջոցն զէպ 'ի լուսաւորութիւն, զէպ 'ի նորանոր գիտութիւններ և առողջամիտ հասկացողութիւններ յառաջ գնալու։ Ամենայն մի լուսաւորեալ ազգի մէջ բարձր արձանի նման կանգնած է այս անհերքելի ճշմարտութիւնն, թէ ամենայն մի անհաստ սրբազնագոյն պարտք պէտքէ համար է իւր մայրենի լեզուի ուղւոյն արիւղ որքան որ կ'ըզրն նորահոգեկան կարողութիւններն. որպէս զի այնուհետև օտար լեզուներն ուսմամբ գրականութեան մէջ կարողանայ անսպթաք յատաճ գնալ առաջնորդ ունելով ինքեան իւր ազգի գրականական ամրապինդ գաւազանը, որպէս զի կարող լինի իւր ազգութեան ներքին սահմաններն թեւակոխել, ձանաչել քաջապէս թէ զո աստիճանի վերայ կանգնել է իւր ազգային լեզուի գրականութիւնը, թէ արդեօք կ'ըստօրանոյ այն նոյն աստիճանից, թէ ընդհակառակն ներքե կ'իջանէ, և վերջապէս ձանաչել ինքն իրան՝ ուրիշներին ուղղապէս ձանաչելու համար։

և ամենայն մի լուսաւոր ազգն այս ճշմարտութեան սրբազան յարգը զիտելով, յատաճ կ'քայլափոխէ զայն ինքեան միայն ունելով ուղեցոյց զէպ 'ի լուսաւորութիւն, և եթէ սրատես աչօք նկատենք, կ'տեսնենք, որ չկայ մի այնպիսի ազգ, որ լուսաւորութեան, այն է՝ բարոյական և նիւթական երջանիկ վիճակով փայլի, և եթէ նորա գրականութիւնը ձոխաբար և արագապէս յատաճ էի ընթանալ զէպ 'ի կատարելութիւն. չկայ այնպիսի ազգ մի, որ համազգային բարօրութեան հասած լինի, և ուշադրութիւն և հետաքրքրութիւն զըրաւած լինի իւր վերայ, եթէ չունի իր սեպհական լեզուն և հետևաբար գրականութիւնը, Այս ճշմարտութիւնը և իմեր Հայկեանս ազգի մէջ ձանաչուել է այն և ամենայն մի անհաստ պարտաւոր է աշխատել սորա վերայ կանգնելու իր գիտութեան հիմն, զի առանց այս հիման անհաստատ է ամենայն մի գիտութիւն. և ո՛ր և իցէ լեզուագետ անձն եթէ ծանօթ չէ իւր մայրենի լեզուին ներքին ուղւոյն, անկարծիք նորա գիտութիւնը արմատական չէ, և նա ինքն էլ ձանաչելով այս անուղղելի պակասութիւնը, աւաղ կը կարգայ իր վերայ, Հանգիստ սուրբ ոսկերաց մեր մատենագիրներն, որոց ճիշդ եղաւ Հայոցս գրականութեան զուրիտ պակեղ զարնեայ սրակներով. այն անմտաց կ'մնան ամենայն մի հայագէտ սրտից մէջ Խորենացւոյ, Ազիշէի, Եամբրոնացւոյ, Ընորհայրոյ և այլոց մեր հոգեկնց վարդապետների անունները, զորոնք մի առ մի թուել կարիք չկայ այսօր, հաւատալի լինելով թէ իւրաքանչիւր հայի ճիշն եղած լինի զրկել Հոգւոյ մէջ այն Սրբազան Կատենագիրների անուններն և աւանդներն, որոնք Հայկական գրականութեան պարտիզն մէջ որպէս անուշահոտ վարդեր և շուշաններ են հանդիսացել, և միով բանիւ զեղեցկազարդ զարնան բաղմարեղուն, ախորժելի և օգտաւէտ պտուղներ, Ամենայն մի ազգի նշանակութիւնը կ'որոնուի իր գրականութեան հետքերի մէջ. ամենայն մի ազգ կ'ստործի իր գրականութեամբ, և աւելի ևս պարծանաց և ուշադրութեան արժանի լինելու և իրական երջանկութեան տարրը ընդունելու համար կ'աշխատի օր քան զօր ձոխացնել նորան հարուստ և դիւրահասկանալի ոճերով. ուստի և ահա այսօրուան օրս լուսաւորեալ ազգաց անուններն անգամ պատկառելի են ամենայն մի

ազդի մտ, վասն զի նոցա դրականութեան շահը կ'փայլի մշտապայծառ լուսաւորութեամբ, վասն զի նոցա պիտաւոր ջանքն և ճիւղն է խրիանց մայրենի լեզուի երկնապարգև ներշնչութիւնն ընդունել և մշակել: Բայց սուրբ նշխարաց մեր երանելի վարդապետներին, որ որպէս անմահ մեծագործութիւններ թողին յետնոցս աւանդ Հայկական դրականութեան պարունակող մատեններն: Ամենայն մի Հայագէտ օտարազգի ուսումնականի ծանօթ են մեր հոգեկոյս մատենագիրների սուրբ անուններն և մատենագրութիւններն: Կ'ընթեռնուն նոքա անգագար հետաքրքրի աշխուժով. և նոցա արժանավայել գործոց նշանակութիւններն ճանաչելով՝ նոքա ևս կ'կրկնեն հանգիստ ձեզ: Եթէ Հայկական գրականութիւնը արժանի է գովեստից և ուշադրութեան օտար ազգերին, և նորա քաղցր ճաշակն մեզ Հայոցս քմբերին զմայլումն կ'բերէ, և երկնային մանանայի պէս կ'յագնենէ զմեր հողիքն, և միանգամայն ուրիշ գիտութիւններ ձաշակելու ոյժ և աշխոյժ կ'տայ, և եթէ զանապիւր

գործունէութեամբ միայն կ'հասանի ամենայն մի ժողովուրդ լուսաւորութեան, և նորա ընթացքը դէպ 'ի գիտութիւնն անսպթմար է և ուղիղ, եթէ ունի նա ջանակուս և անձնաղոճ մեծագործ անձինքներ այս սրբազան առարկայի յառաջադիմութեանը համար աշխատող, և մեզ չհայերիս դէպ 'ի գիտութիւն Կանոն ճանապարհներն ունին ուղիղ շաւիղներ. ուրեմն չ'զանդաղինք, հայ եղբայրներ, մեր մայրենի լեզուի սրբութիւնը իրական կերպով պաշտելու. չ'նայինք անտարբեր սրտիւ լուսաւոր ազգերի յառաջադիմութեանց վերայ. գոն գործենք ոչ միայն անուամբ Ազգութեան սուրբ պարոքն անվճար թողնելու, այլև գործնական կարողութեամբ փութանք մեր ճոխ գրականութեան պարտիզին մեջ աշխատելու, որպէս զի կարողանանք տիրել մեր մայրենի լեզուին նոյն պարտիզի քաղցրաճաշակ պտուղների վայելման յոյսով:

Յովնանէն Մարտիկանց:

ՅԱՂԵՆՈՒՄԵՐՈՒԹՅՈՒՆ

Գ Ա Ր Ո Ւ Ն

Էանց ձմեռն և ցրտութիւն՝ մեզ մտախուղն շուտափոյթ,  
 Առուաց պաղիլ էանց ահա և բարդիլ ձեանցն կոյտ 'ի կոյտ.  
 Խոտվարար հողմք սաստկաշունչ և ամպք մթին ձմերան,  
 Յրտասառսուս բուքք մարդախեղդ անցին նդ աւուրց տիրական  
 Երդ ժամանեաց մեզ ճոխ դարուն զեփուսն զմեզք առնու պար,  
 Ծիծաղադէմ՝ ոսկեգիսակ փաղիլի արփին յիւր կամար.  
 Երժամափայլ սահին առուակք և խոխոջնն ջինջ աղբերք.  
 Մեղրամակարդ ծաղկամբք պճնին Կաշոք և Հովիտք բարբերք:  
 Քաղցրազրուցիկն ահա Սարեակ՝ տեսէք զիարդ գեղգեղէ.  
 Մինչ զի զսիրտ և զսիրտ մարդկան՝ ահ 'ի զմայլու արկանէ.  
 Միրանուագն սիրուն Սոխակ ընդ թուփ ընդ ծառ և ծաղիկ,  
 Անդուլ երգօք զիւրն որոնէ զսիրելին վարդ փափկիկ.  
 Չայնք կաբաւուց և 'ի հովտաց արձագանգն համակ խինդ,  
 Խումիք ճնճղկաց ընդ ճիղ ծառոց ճուռոզնն յար թինդ 'ի թինդ.  
 Աշխատասէր և դունդք մեղուաց տղղան բղղան 'ի ծաղիկ,  
 Շարարածուծ ծծել զհիւթ 'ի նիւթ մեղրից անուշիկ:  
 Տեսէք որպէս քաղցրիկ մայէ չքնաղ գառնուկն 'ի դաշտին,  
 Եւ աշխուժիւ հովիւրն քաջ սուրէ սրիւնգն մեղմազին.  
 Բառանչք եզանց՝ խրխինջք ձիոց ընդ բլուրս ընդ հովիտ,  
 Որպէս առնեն համակ ունկանց ուրախախառն լսելի: